Հաստատում եմ՝
տնօրեն /ձեռք/ Գ. Մարգարյան

15. 06. 2023թ.

ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

Ազգային երգ ու պար

2022-2023 ուստարի

Կրթական աստիճան՝ Հիմնական / 5-9-րդ դասարաններ/

Տարեկան՝ 68 ժամ

Շաբաթական՝ 2 ժամ

Ծրագրի հեղինակ՝ Հայարփի Մարգարյան

Քննարկվել, հավանության է արժանացել <<Հայկաձորի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի մանկավարժական խորհրդի նիստում

Քննարկվել, հավանության է արժանացել մեթոդմիավորման նիստում

ԽՄԲԱԿԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ՝

1.Ներկայացնել պարարվեստի, ազգային երգ ու պարի մշակութային արժեքները, ժողովրդական ավանդույթները:

2_.Ձևավորել և զարգացնել սերը ազգային երգ ու պարի նկատմամբ:

_Վերականգնել և ուսումնասիրել ազգային ծեսերը:

_Ռազմահայրենասիրական դաստիարակության խթանում:

_Ազգային երգ ու պարի ավանդույթների միջոցով իրականացնել հայեցի դաստիարակություն:

_Ազգային երգ ու պարի բնագավառում ստեղծագործական զարգացում:

_Ազգային պարը դարձնել առօրյայի մասնիկ:

_Ազգային երգ ու պարի միջոցով երեխաների հետաքրքրությունը ուղղել դեպի ազգային մշակույթը:

_Կազմակերպել համերգներ և ակտիվորեն մասնակցել ազգային տոներին:

Արժևորել ազգային պարը, պահպանել ազգային արժեքները, բարձրացնել ազգային և հոգևոր մշակույթի սանդղակը: Արժևորել ազգային երգ ու պարի դերը մեր մշակույթի մեջ:

Վերջնարդյունքներ

Կկարողանան ճիշտ կատարել ազգային պարի վարժությունները, ճիշտ բեմադրել ազգային պարերը, կիմանա պարերի իմաստը, նրանց ստեղծման և ծագման պատմությունը:

Պարարվեստի մշակութային արժեքների , ժողովրդական ավանդույթների ծանոթացում:

Պարային բեմադրություններում ճիշտ և գրագետ շարժումների օգտագործումը և կիրառումը:

Ռազմահայրենասիրական դաստիարակության խթանում:

Տաղանդավոր սաների բացահայտում և մասնագիտական կողմնորոշում:

Այլ ժողովուրդների պարերի տեսական իմացություն:

Կկարողանա իր սովորածը ուսուցանել այլ մարդկանց:

Հանրակրթության հիմնական ծրագրի ակնկալվող վերջնարդյունքներ՝ Հ 24, Հ 27, Հ 32, Հ 33, Հ 42, Հ43, Հ 44, Հ 45, Հ 51

Նյութատեխնիկական բազա

Հայելիներ, ազգային տարազներ

ԹԵՄԱՏԻԿ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

Հ/Հ	Բովանդակությունը	Նպատակը	Ժամաքանակը	Նշումներ
1	Ի՞նչ է պարը:		1	
2	Պարաքայլերի հիմնական տարբերակները		2	
3	Տեղեկություն ավանդական համայնքի մասին		2	
4	Ծիսական պարերի ու պարերգերի առանձնահատկությունները		2	
5	Զսպանակային պարաքայլերի ուսուցում		1	
6	Գյովնդ պարի ուսուցում		2	
7	Պարերգ << Հո՛յ նար>>		1	
8	Վերվերի պարի ուսուցում		2	
9	Տեղեկություն հարսանյաց ծեսերի առանձնահատկությունների մասին		2	
10	Թամզարա պարի ուսուցում		3	
11	Թամզարա պարի ամփոփում		1	
12	Փափուրի պարի ուսուցում		3	
13	Փափուրի պարի ամփոփում		1	
14	Էջմիածին պարի ուսուցում		2	
15	Էջմիածին պարի ծագումնաբանությունը		1	
16	Կարնո քոչարի պարի ուսուցում		2	
17	Մշո խրո պարի ուսուցում		2	
18	Քերծի պարի ուսուցում		2	
19	Լորկե ծիսական պար		2	
20	Մայրոկե պարի ուսուցում		2	
21	Էզրումի շորոր պարի ուսուցում		2	
22	Տոտիկ-տոտիկ պարերգի ուսուցում		1	
23	Սասնա շորոր պարի ուսուցում		2	
24	Բուլուլ աշխատանքային պարի ուսուցում		2	
25	Խամխամա պարերգ,ծիսական պար		2	
26	Թաշկինակներով պարի ուսուցում		2	
27	Յարխուշտա պարի ուսուցում		2	
28	Յարխուշտա պարի ծագումնաբանությունը		1	
29	Ֆնջանա պարի ուսուցում		2	
30	Հայրենասիրական երգ (Ով որ քաջ է,Առաքել Մուշեղ)երգերի տեքստերը		2	
31	Ազգային ծեսեր (Վարդավառ,Անձրևաբեր,Բարեկենդան)		1	

32	Պաշտամունքային պարեր և պարերգեր Տալտալա(ստուգաբանություն և երգային տեքստ)		2	
33	Թարս պարի ուսուցում		2	
34	Խոյի պաշտամունքը հայ իրականության մեջ և նրա արտացոլքը հայ ավանդական մշակույթում		1	
35	Երգերի ժանրեր(պարերգ,քնարական հոգևոր,կատակ երգ,աշխատանքային, ծիսական և ռազմահայրենասիրական այլ երգեր)		1	
36	Հայ ավանդական երգի ձյուղեր(գեղջկական,գուսանա-աշուղական,քաղաքային)		2	
37	<<Մարալո՛ ջան մարալո>> պարերգի ուսուցում		1	
38	Կոմիտասի դերը ազգային պարերի և երգերի գրառման գործում		2	
39	Պարերի և երգերի ամփոփում		2	
	Ընդամենը		68	

Օգտագործված գրականության ցանկեր՝ Ս.Լիսիցյան <<Հայկական հինավուրց պարեր>>